

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՕԹՆԵԱԿԸ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՁ

Այս տարի, Յունուարի վերջին օրը կիրակիի զուգադիպած ըլլալուն, եկեղեցիներու Միութեան աղօթաժողովները կայացան ամսուն վերջին 8 օրերու ընթացքին:

Աղօթաժողովներու մասնակցող եկեղեցիները նոյնն էին ինչպէս նախորդ տարիներունը: Զանց առնուեցաւ միայն Յորանչիսկեանց եկեղեցւոյ մէջ Արեւելեան եկեղեցիներէն միայն ծէսով մատուցուած Պատարագը, Լատինաց Պատրիարքին նոյն եկեղեցւոյ մէջ մատուցած անդրանիկ Պատարագին (24 Յունուար) և նախկին Պատրիարքին Սալէզեաններու հիմնադիր Տօն Պատարագի մահուան 100 ամեակին առիթով (31 Յունուար) մատուցած հրաժեշտի Պատարագին պատճառաւ:

Կիրակի, 24 Յունուար: Ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի ևս աղօթաժողովներէն առաջինը կայացաւ Սէյնթ Ճօրճ Անկլիքան եկեղեցւոյ մէջ: Աղօթքները, ընթերցուածներն ու հոգևոր երգերը մեծազոյն մասամբ կատարուեցան Արաբերէն և Անգլերէն լեզուներով: Քարոզիչն էր Անկլիքան երէցներէն մին:

Երկուշաբթի, 25 Յունուար: Մթնշաղին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարը լեցուն էր ամենազգի աղօթաւորներով: Ս. Խնդեան և Աստուածայայտնութեան տօներու քաղցրալուր մեղեդիները գրաւած էին յայտագիրը: Անոնք, ընդմիջուած քանի մը լեզուներով — Շուէտերէն, Անգլերէն, Եթովպերէն, Արամերէն (Ասորերէնի տարբերակը, Քրիստոսի խօսած լեզուն), Գերմաներէն և Արաբերէն — կատարուած Ս. Գրական ընթերցուածներէ և աղօթքներէ, ստեղծեցին կրօնաշունչ մթնոլորտ մը: Անգլերէնով քարոզ մը ընթերցաւ հիւրաբար Ս. Աթոռ գտնուող Գերշ. Տ. Վարդան Եպս. Տէմիրճեան: Փակման օրհնութիւնը տուաւ Լատինաց Պատրիարքարանի Դիւանապետ Մօնս. Քամալ Պաթհիչ:

Երեքշաբթի, 26 Յունուար: Լուսերականներու եկեղեցին փութացած էին բազմազգի հաւատացեալներ, իրար խառնելու իրենց աղօթքն ու մաղթանքը քրիստոնէական սիրոյ և միութեան ի խնդիր: Բացի Բողոքական հոգևորականներէ — Լուսերական, Անկլիքան, Սկոթական ևլն. — յայտագիրն մէջ մաս առաւ Յոյն-կաթոլիկներու Եպիսկոպոս Գերշ. Լուծֆի Լահիամ: Քարոզիչն էր Գերշ. Նա'իմ Նասսար, Լուսերական համայնքի Եպիսկոպոսը: Ներկաները ապա բարձրացան քովետի սրահ, ուր ճաշակեցին աւանդական հացն ու գինին:

Զորեքշաբթի, 27 Յունուար: Քաղաքիս Հրէական բաժնին մէջ գտնուող Եթովպական կլարաշէն եկեղեցին փութացած էին տարբեր համայնքներէ ներկայացուցիչներ: Մեր կողմէ Տ. Գուսան Արեղայ կարդաց Առաքելական ընթերցուած մը: Եզան նաև այլ լեզուներով ընթերցումներ: Համայնքի Եպիսկոպոսը Անգլերէնով քարոզ մը խօսեցաւ և տուաւ իր փակման օրհնութիւնը:

Հինգշաբթի, 28 Յունուար: Որոշ է վայրը աղօթահաւաքին: Հինգշաբթի և վերջին Ընթերցաց վերնատուն: Հոն՝ ուր մեծ օր մը, եթնեակի նոյն օրուան երեկոյան, մեր Տէրը հաստատեց Ս. Հաղորդութեան Խորհուրդը և իր հրաժեշտին երկար աղօթքով խնդրեց Հօրմէն որ իր հետեւորդները — քրիստոնէաները — չմի ի-

ցնն, որպէս դու Հայր յիս՝ և ես ի քեզ» (Յովհ. ԺԷ. 21): Ճոխ էր յայտագիրը ու տպաւորիչ, և կը բովանդակէր տասնմէկ լեզուներով աղօթքներ ու ընթերցուածներ — Արաբերէն, Երբայերէն, Ֆրանսերէն, Իտալերէն, Գերմաներէն, Հայերէն, Յունարէն, Անգլերէն, Ռուսերէն, Եթովպերէն և Ասորերէն: Իր մասնակցութիւնը քերական մեծ մեծ Տիրացոյններէն կազմուած երգչախումբ մը, առաջնորդութեամբ Տիրա Սահակ Գալայճեանի և Հայր Գուսանի: Հոգեւորականները մը եղաւ Հապէշ աղջիկներու երգեցիկ խումբը: Հանդէս եկաւ նաև Երբայախօս Քրիստոնեաներու փոքրաթիւ երգչախումբը: Խօսք տուին Բենեդիկտեան Հայ Գարձիլ Փիքսնէր և Սկովտական երէց Վեր. Միլլեր-Սքոթ. փակման օրհնութիւնը, «Սուրբ Հոգւոյ իջման» սենեակին մէջ, տուաւ Անկլիքան Եպիսկոպոս Գերաշնորհ Սամիր Բաֆիթի:

Ուրբաթ, 29 Յունուար: Եաֆայի դրան մօտ գտնուող Յայն-Կաթոլիկներու Աւետման Եկեղեցին հիւրընկալած էր աղօթաժողովը: Աղօթատան բոլոր պատերուն վրայ շարուած ամենազգի սուրբերու անքթիթ նուազածքին տակ, ամենազգի հաւատացեալներ վայելեցին Բիւզանդածէս երեկոյեան ժամերգութեան զաշնաթաւով մեղեդիները: Տեղի ունեցաւ հացի, գինիի, ցորենի և ձէթի օրհնութիւն: Համայնքապետ Լուիս Եպ. Լահում իր անուանի պերճախօսութեամբ տպաւորիչ քարոզ մը խօսեցաւ: Աւարտին, ներկայ հոգևորական դէմքերը եկեղեցւոյ դասէն տուին իրենց օրհնութիւնը — իւրաքանչիւրը իր լեզուով — ներկայներուն, և նախ իրենք ու յետոյ բոլոր ժողովուրդը ճաշակեցին օրհնուած հացն ու գինին: Աղօթաժողովին բացառաբար մասնակցեցան նաև Հայ և Ասորի Կաթողիկէ Համայնքապետ Հայրերը:

Եւրաթ, 30 Յունուար: Կարգը Լատինաց էր: Բայց նոյն օրը Պատրիարքը իր առաջին հանդիսաւոր Մուտքը պիտի դորձէր Բեթղեմէի Ս. Մննդեան Տաճար: Նկատելով որ այս տարի 1000ամեակն է Ռուսիոյ մէջ Քրիստոնէութեան պետականացման, Ռուս Միաբանութեան Մեծաւորը փափաք յայտնած էր առաջին անգամ ըլլալով քերէ իր մասնակցութիւնը Եփրատեցի շարժումին: Ուստի, միջնադին, բազմազգի հաւատացեալներ խոնուած էին Russian Compoundի St. Alexander մատարան մէջ: Ռուս մայրապետներ եղանակեցին քաղցրածայն: Մեծաւորը Ռուսերէն և Անգլերէն լեզուներով գոհարանական աղօթք մը կարդաց և հրաւիրեց ներկայները ընդունելութեան:

Կիրակի, 31 Յունուար: Ասորւոց Ս. Մարկոս Աւետարանչի եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ եղբայրակիչ հանդիսութիւնը: Յայտագրի ընթացքին, Տ. Գուսան Արեղայ եղանակաւորեալ արտասանեց 122րդ Սաղմոսը: Գերշ. Տիոնիսիոս Կակկաուի Եպիսկոպոսը կուս քարոզում մը, Արաբերէն լեզուով (որ Անգլերէնի ալ թարգմանուեցաւ), շեշտեց անհրաժեշտութիւնը քրիստոնէական համագործակցութեան:

Աւելորդ չըլլայ հոս յիշել, թէ եղբայրակիչ հաւաքը տեղի կ'ունենայ փոխ ի փոխ, տարի մը Ասորւոց և տարի մը Սկովտացւոց Սէյնթ Էնտրիկ եկեղեցւոյ մէջ:

Բացի Հինգշաբթիի հաւաքէն, որ սկսաւ ժամը 4ին, միւսները կատարուեցան ժամը 5ին: Նկատի առած անցնող Դեկտեմբերի 9էն ի վեր Արևելեան Երուսաղէմի և Արևմտեան Ափին մէջ ընթացք առած քաղաքական խլրտումները, խաղաղութեան համար մասնաւոր աղօթքներ եղան գրեթէ իւրաքանչիւր հանդիպումի ընթացքին:

Պատրիարքարանիս կողմէ, յիշեալ գրեթէ բոլոր հաւաքներուն ներկայ եղան Հոգւ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան և Հոգւ. Տ. Գուսան Արդ. Ալճանեան:

Ուրախութիւն է մեզ հաստատել, որ հակառակ այս տարուան բացառապէս խիստ ձմրան — տեղացող անձրևին քանակը անցնող քսանամեակի ընթացքին չունէր նման բարձրութիւն —, ամէն ազգէ, տարիքէ ու ասպարէզէ մարդիկ բերին իրենց սրտեւունդն մասնակցութիւնը գեղեցիկ այս շարժումին, ինչ որ յայտարար նշան է թէ տարուէ տարի մարդոց սրտին մէջ կ'արմատանայ եկեղեցիներու միջև սին ու պատիր նկատումներով բարձրացած արուեստական պատուարները քանդուած տեսնելու և, Քրիստոսի բաղձանքին համաձայն («Եղիցին մի հօտ և մի հովիւ»), միակամ ու միասիրտ զԱստուած պաշտելու քաղցր երազը:

Գ.